ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Բառակազմության ուսուցումը 6-րդ դասարանում

Հետազոտող ուսուցիչ՝ Գրիգորյան Սուսաննա Ալեքսանի

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3
Բառակազմություն.....4
Բարդություններ..... 5
Անվանական հարադրություններ..... 6
Բայական հարադրություններ..... 7
Համադրական բարդություններ..... 8
Կցական բարդություններ..... 8
Հապավական բարդություններ..... 9
Բառակազմական հնչյունափոխություն..... 10
Բառակազմության ուսուցումը 6-րդ դասարանում..... 11

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Շատ հաճախ հարկ է լինում երեխաներին բացատրել, թե ինչու է կարևոր իմանալ բառի կազմությունը։ Նրանք այդպիսով բացահայտում են բառի բաղադրիչների իմաստային կապերը, հաճախ նաև բառի ուղղագրությունը։ Օրինակ՝ «Ինքնաթիռը բարեհաջող վայրէջք կատարեց» նախադասության մեջ ունենք վայր և էջ (ք-ն նախածանց է) արմատները, որը նշանակում է ցած իջնող ճանապարհ կամ օդանավի՝ գետնին իջնելը։

Մեր օրերում կան շատ արժեքավոր բառակազմական բառարաններ, որտեղ բառերը դասավորված են այբբենական կարգով։ Այդտեղ նշված են նաև բառակազմության ժամանակ տեղի ունեցած փոփոխությունները։

Այսպիսով, աշակերտներին ուղղագրություն ուսուցանելու գործում մեծ դեր ունի բառակազմությունը։

ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

Երբ ասում ենք բառակազմություն,նախ հասկանում ենք լեզվաբանության բաժինը,որը զբաղվում է բառերի կառուցվածքի,կազմության օրենքների ու կանոնների քննությամբ։Մյուս իմաստով բառակազմությունը նոր բառերի կազմության գործընթացն է։Այս գործընթացը շատ ծավալուն է։ Այն ներառում է ինչպես բառակազմական օրինաչափությունների պատմական կապերը(տարաժամանակյա),այնպես էլ լեզվի ժամանակակից փուլում գոյակցող միավորները,որոնք բացատրվում են միայն լեզվի այդ շրջանում գործող օրինաչափություններով(համաժամանակյա)։Այս տեսակետից, օրինակ,տիկին,տիեզերք,տեր բառերը պարզ են , իսկ պատմական բառակազմության տեսակետից տարրալուծվող միավորներ են (տի (մեծ+կին,տի+այր…)։

Բառակազմական ժամանակակից և պատմական փաստերը որոշ իմաստով լրացնում են իրար և բառակազմական օրինաչափությունների քննությունը դարձնում բազմակողմանի և ամբողջական։

Բառակազմության մեջ կարևոր դեր ունեն ձևույթները.իմաստային տեսակետից այն բառի անբաժանելի,այլևս չտրոհվող մասն է և իմաստի ու ձևի տեսակետից՝ լեզվի նվազագույն միավորը։

Բառերն ու ձևույթները իրարից տարբերվում են նրանով,որ

ա) բառերն արտահայտում են կոնկրետ իմաստ,իսկ ձևույթների իմաստը ընդհանուր է։

բ) բառերն օժտված են քերականական ձևավորվածությամբ,ձևույթները՝ ոչ։

գ) բառերն անկախ միավորներ են,որոնցով նախադասություն ենք կազմում,իսկ ձևույթները անկախ չեն.նրանք կազմում են բառի մաս։

Ձևույթները լինում են 2 տիպի՝ հիմնական և երկրորդական։

1) Հիմնական ձևույթը բառային իմաստ պարունակող միավորն է,որը հիմնականում հանդես է գալիս որպես արմատ (հնչյունափոխված կամ անհնչյունափոխ)։ Լեզվում ինքնուրույն գործածություն ունեցող ձևույթները արմատական բառերն են (հաց,տուն,լավ)։Հիմնական ձևույթների մի մասը ինքնուրույն գործածություն չունի և ածանցման կամ բառաբարդացման շնորհիվ են վերածվում բառերի.ինչպես՝ (վազ-ք >վազք,հաց-թուխ>հացթուխ)։Արմատային տարբերակները ժամանակի ընթացքում իմաստափոխվելու և միմյանցից տարբեր իմաստներ ձեռք բերելու դեպքում դառնում

են ինքնուրույն արմատներ։ Օրինակ՝ կոտորել,կոտրել,կտրել,կտոր,կտուր կամ հարդարել և զարդարել,այրական,առնական և արական։

2) Երկրորդական ձևույթները ածանցներն են։ Դրանք միանում են հիմնական ձևույթներին (բառին կամ արմատին),փոխում են նրանց իմաստները և կազմում նոր բառեր։

Վերջավորությունները երկրորդական քերականական ձևույթներ են,որոնցով կազմվում են բանաձևեր (աչքից,աչքով,աչքում…)։

Հոդակապը նույնպես երկրորդական քերականական(ձևակազմական) ձևույթ է և կապակցում է բառի բաղադրչները։

Այսպիսով,նոր բառերի ստեղծումը բառապաշարի լրացման հիմնական աղբյուրն է։Ժամանակակից հայերենը նոր բառերի կերտման եղանակները հիմնականում ժառանգել է լեզվի զարգացման նախորդ փուլերից (բառաբարդացում,ածանցում)։

Նոր բառերի ստեղծման ժամանակակից եղանակ է հապավումը։Նոր բառերի կազմությունը,ինչպես մյուս լեզուներում,այնպես էլ հայերենում կատարվում է արդեն առկա արմատների հիման վրա։

Ժամանակակից հայերենում բառերն ըստ կազմության լինում են պարզ և բաղադրյալ։

1) Պարզ բառերը կազմված են միայն մեկ հիմնական ձևույթից։Դրանք կոչվում են նաև արմատական(հայր,խաղաղ,հազիվ,տիկին…)։

Պարզ և արմատական բառերը ածանցման կամ բառաբարդման միջոցով հիմք են ծառայում նոր բառերի կազմության համար։

2) Բաղադրյալ բառերը իրենց հերթին ստորաբաժանվում են բառաձևերի(վերջավորություններով կազմված(գրել,տունս…), ածանցավոր,բարդ և բարդ ածանցավոր բառերի։

<u>Բարդություններ</u>

Երկու կամ ավելի հիմնական ձևույթների կամ բառերի կցումով կամ հարադրությամբ կազմված բարդությունները,որոնք ունեն մեկ ընդհանուր շեշտ,կոչվում են բարդություններ կամ բարդ բառեր։Դրանք լինում են վերլուծական և համադրական։

Վերլուծական բարդությունները ունեն մեկ ընդհանուր հիմնական շեշտ և գիտակցվում են որպես բառային մեկ միավոր։ Վերլուծական բարդությունների մեջ են մտնում

հարադրությունները և կրկնավորները.օրինակ՝ձեռք տալ,ներս տանել,մեռնել-պրծնել,մեծ-մեծ։

Կրկնավոր բարդություններում արմատը կարող է կրկնվել նույնությամբ կամ հնչյունափոխական տարբերակներով (տերտեր,կուռկուռ,կարկառ,սարսուռ) ։ Կարող է արտահայտվել նաև բառաձևային տարբերակներով (գլուխ գլխի,դեմ դիմաց)։Կրկնավոր հիմքով կարող են կազմվել բարդ ածանցավոր բառեր(կռկռոց,անբարբառ)։Կրկնավոր հիմքերից այլ արմատներով կարող են կազմվել նոր բառեր (հետաքրքիր,թրթուրավոր) ։

Կրկնվող արմատները կարող են միացած լինել շաղկապներով (լիուլի,մեկնումեկը), նախդիրներով (օրըստօրե,հևիհև,գույնզգույն)։

Այսպիսով, արմատի կրկնությամբ կազմված բարդությունները կոչվում են կրկնավորներ։

Հարադրական են այն բարդությունները, որոնց բաղադրիչները գրվում են անջատ (ի միջի այլոց,ինչ-որ,ուտող-խմող)։ Ինչպես նկատեցինք, հարադրական բարդությունների բաղադրիչները կարող են գրվել և՛ միության գծիկով, և՛ առանց գծիկի։

Սովորական,ոչ դարձվածքային հարադրական բարդությունների բառադրիչ բառերը պահպանում են իրենց բառային իմաստները.ինչպես՝ հազար ու մեկ, կես անել,հազիվ թե,կար անել։

Իսկ դարձվածքներ ներկայացնող հարադրական բարդությունների բաղադրիչները կորցնում են իրենց բառային իմաստները.ինչպես՝ գլխի ընկնել,ձեռքը բաց,խելքի տոպրակ,աչք գցել։ Հարադրական բարդությունները կարող են լինել անվանական և բայական։

<u>Անվանական հարադրություններ</u>

1) Գոյականական-վար ու ցանք,ձյուն-ձմեռ
2) Ածականական-կարմիր-կանաչ,լռիկ-մնջիկ
3) Մակբայական-վեր ու վար,ետ և առաջ
4) Թվականական-հազար ու մեկ,տասը-քսան
5) Շաղկապներով-թեկուզ և ,իբրև թե

Բայական հարադրություններ

Հարադրական բարդությունների զգալի մասը բայական են։Նրանք կարող են կազմված լինել մեկ (կամ երկու) բայից և հարադիր բառից կամ երկու բայերից,ունենում են բառային առանձին իմաստ,բայց մեկ շեշտ.օրինակ՝ գոր անել,պար գալ,թաց անել։

Հարադրական բայերը հիմնականում մեկ բառի արժեք ունեն և կարող են փոխարինվել միաբառ,նույնարմատ բայական համարժեքով(վազ տալ-վազել,զրույց անել-զրուցել)։

Կան դեպքեր,երբ հարադրական բայերի և նրանց միաբառ զուգահեռների իմաստերը կարող են նաև չհամընկնել.օրինակ՝ կանգ առնել-կանգնել,թափ տալ-թափել,ման տալ-մանել։

Դարձվածքային հարադրական բայերը չունեն նույնարմատ համազորներ (գլխի ընկնել-կռահել,գլուխ տալ-բարևել, ձեռք առնել-ծաղրել)։ Եթե երկու անկախ բայերից է կազմվում հարադրականը,այն անվանում ենք զուգադրական բայեր։

Զուգադրական բայերի բաղադրիչները միաժամանակ խոնարհվում են,ինչպես՝ գնացի-եկա,գնաց-եկավ…)

ա) Զուգադրական բայերը կարող են կազմվել մեկ բայից և մեկ հարադրավոր բայից.օրինակ՝ ծակել-դուրս գալ,կտրել –դեն գցել։

բ) Կարող են կազմվել մեկ բայից և տալ բայից (խոնարհվում է միայն տալ բայը(գրել տալ,հաշվել տալ,բռնել տալ) ։

Հարադրական բայերը կազմվում են որևէ հարադրով և բայով (անել,լինել,դառնալ, բերել տալ…)։

Հարադրավոր բայերի մեծ մասը կազմվում է տեղ ցույց տվող բայերով և մակբայներով և հիմնականում շարժում ցույց տվող բայերով (առաջ ընկնել,դեն գցել,դես քշել,դուրս անել,ետ առնել,մեջ մտնել,մոտ բերել,վրա գալ…)։

Ի նախդիրով հարադրավոր բայերը գրաբարի համաբանությամբ կազմված ձևեր են։

Համադրական բարդություններ

Համադրական են այն բարդությունները,որոնց բաղադրիչները գրվում են միասին՝ առանց բացատի և առանց միության գծիկի։Համադրական բարդությունները լինում են երեք տեսակ՝ իսկական,կցական և հապավական։

Իսկական են կոչվում այն բարդությունները,որոնք բաղադրվել են հենց որպես համադրական կազմություն։ Օրինակ՝ խորիմաստ,մենակյաց,ամենագետ։Եթե դրանք արտահայտենք բառակապակցությամբ,ապա համադրական բարդությունը և համապատասխան բառակապակցությունը կունենան տարբեր ձև և կառուցվածք։ Օրինակ՝ գործընկեր>գործի ընկեր,մենակյաց>մենակ ապրող,ամենագետ>ամեն ինչ իմացող։

Իսկական բարդությունները լինում են հոդակապով (կարող է թաքնված լինել) կամ առանց հոդակապի։ Օրինակ՝ ձրիակեր,միգապատ,ջրկիր,հացթուխ,ոսկեգույն,բարեբեր)։

Իսկական բարդությունների բաղադրիչները կարող են լինել ինքնուրույնաբար չգործածվող և հնչյունափոխված արմատներ։ Օրինակ՝ լռակյաց,զբոսայգի,կիսամյակ)։

<u>Կցական բարդություններ</u>

Կցական են այն համադրական բարդությունները,որոնք առաջացել են նախկին հարադրական բարդությունների կցման հետևանքով։Այսինքն՝ փոխված է այդ բառերի (կամ բառակապակցությունների) կառուցվածքը.միացել են և մեկ շեշտ են կրում։ Օրինակ՝ գլուխ գործոց>գլուխգործոց,գյուղե գյուղ>գյուղեգյուղ։Կան բառեր,որոնց գրության ձևեր դեռևս փոփոխության ընթացքի մեջ են (ի միջի այլոց-իմիջիայլոց,գունդ ու կծիկ-գունդուկծիկ)։

Կցական բարդությունները հիմնականում նախկին բառակապակցություններ են (օր+ավուր,առ+և+տուր,ինքն+ըստ+ինքյան)։

Կցական բարդություններին բնորոշ չեն հոդակապը և բաղադրիչների հնչյունափոխությունը։Դրանցում ածանցներ են լինում,եթե նախկին հարադրության բաղադրիչներից մեկը եղել է ածանցավոր։ Օրինակ՝ բերք+ու+բարիք,հ+ամենայն+դեպս։

Այժմ ածանցավոր համարվող որոշ բառեր նունպես կցական կազմություն են,եթե եղել են գրաբարյան նախդիրներով բառակապակցություններ։ Օրինակ՝ առմիշտ,իզուր,իսպառ,իհարկե,ընդամենը։

Հապավական բարդություններ

Բառակապակցության կամ սովորական բարդության բաղադրիչների հապավված,կրճատված ձևրի միացումով կազմված բարդությունը կոչվում է հապավում։Օրիանկ `ուսումնական մասի վարիչ>ուսմասվար,ռիբոնուկլեինաթթու>ՌՆԹ…

Կան հապավումների մի քանի տեսակներ՝ տառային,վանկային և խառը։

Տառային հապավումները արմատների սկզբնատառերով կազմված հապավումներն են։Օինակ՝ջէկ (ջերմաէլեկտրակայան),ԱԺ(Ազգային ժողով)։Տառային հապավումները, որպես կանոն, գրվում են մեծատառերով։Բացառություն են կազմում բուհ,ջէկ,հէկ,աէկ և զազս տառային հապավումները։Օտար լեզուներից վերցված տառային հապավումները կարող են հնչյունադարձվել և գրվել յուրահատուկ ձևով ՝ որպես վանկային հապավումներ(ՍիԷնԷն,ԲիԲիՍի)։ Այս հապավումները կարդացվում են տառերի անվանումներով։Իսկ եթե կարդացվում են որպես սովորական բառ,ապա գրվում են տառային հապավումների ձևով (ՆԱՏՕ,ՅՈՒՆԵՍԿՈ,ԳՈՒԱՄ)։

Վանկային հապավումները արմատների առաջին վանկերով կամ հատվածներով է կազմվում։Օրինակ՝ աշխղեկ(աշխատանքի ղեկավար),սոցապ(սոցիալական ապահովություն)։

Այստեղ մեծատառով են գրվում միայն հատուկ անուններից վերցված առաջին վանկերի առաջին տառերը։Օրինակ՝ Հայխնայբանկ,ՀայՌուսգազարդ։

Խառն են կոչվում այն հապավումները,որոնք մասամբ տառային են,մասամբ՝վանկային կամ էլ վերջին բաղադրիչը ամբողջական բառ է։Օրինակ՝ Զորահեկ(Զորագետի հիդրոէլեկտրակայան),էլփոստ (էլեկտրոնային փոստ),քիմմաքրում(քիմիական մաքրում)։

Բառակազմական հնչյունափոխություն

Ինչպես տեսանք բառակազմության ժամանակ գործում են հնչյունափոխության օրենքները։Այդ օրենքները հիմնականում կապված են շեշտի տեղափոխության օրենքները։Այդ օրենքները հիմնականում կապված են շեշտի տեղափոխության հետ,երբեմն էլ՝ ձայնավորի միաձուլման հետ։Հետևաբար,հնչյունափոխությունը բնորոշ

չէ նախածանցավոր բառերին.դրանք կարող են հնչյունափոխվել,եթե ենթարկվում են քերականական ձևափոխությունների։

Օինակ՝ մորաքույր>մորաքրոջ,նախասրիտ>նախասրտի։

Բառակազմության ժամանակ հիմնականում հնչյունափոխվում են.

ա) Բառավերջի փակ վանկի **ու** և **ի** ձայնավորնեևը՝ դառնալով **ը** կամ սղվելով(գիր>գրել,մահիճ>մահճակալ)։

բ) Կարող է փակ վանկի **ե**-ն դառնալ **ի** (պարտեզ>պարտիզպան,էջ>իջնել)։

գ) Բառավերջի փակ վանկի **ը**-ն սղվում է.մանր>մանրել,անգղ>անգղաբույն։

դ) Բազմավանկ բառերի **ի** վերջնահնչյունը,**ա** հոդակապին ձուլվելով,հաճախ դառնում է **ե** (տարի>տարեմուտ,Գյումրի>գյումրեցի)։

ե) **Ու** վերջնահնչյունը ձայնավորից առաջ դառնում է **վ**.կատու>կատվազգի,ձու>ձվաձև

զ) **Ույ** երկհնչյունը երբեմն դառմում է **ու** կամ **ը** կամ սղվում է (գույն>գունավոր,բույն>բնավեր,կապույտ>կապտել)։

է) **Յու** երկհնչյունը երբեմն դառնում է **ը** (ձյուն>ձնծաղիկ) կամ սղվում է (արյուն>արնաներկ)։

ը) **Յա** երկհնչյունը (նաև եա գրվող) երբեմն դառնում է **ե**.մատյան>մատենադարան,հրեա>հրեերեն։

Այս բոլոր կանոններն էլ,իհարկե,կարող են ունենալ բացառություններ։Օրինակ՝ հիննյակ,արփիագեղ,սյունաշար,էջադրել։

<u>Բառակազմության ուսուցումը 6-րդ դասարանում</u>

Նախ նշեմ,որ բառակազմական աշխատանքներին երեխաները ծանոթ են ավելի ցածր դասարաններից.դրա համար էլ,կարծում եմ այն հեշտ է տրվում աշակերտներին։

Դասագրքում տեղ են գտել բազմաթիվ հետաքրքիր վարժություններ,որոնք խթանում են երեխայի մտածողությունը։Իհարկե ես չեմ բավարարվում տրված նյութով և դասաժամի մի հատվածը մենք մրցույթի ձևով ենք անկացնում՝ բաժանվելով խմբերի։

Նախօրոք բաժավնած թերթիկների վրա գրված են բառեր։ Մի շարքի աշակերտը մոտենում է գրատախտակին և կարդում իր թերթիկի վրա գրված բառը։

Վայերկյանների ընթացքում նրան պետք է միանա այն աշակերտը,որի թերթիկին գրված բառով կկազմվի նոր բառ։Նույն ձևով կազմակերպում ենք խաղ-մրցույթ՝ կապված ածանցավոր բառերի հետ։Ինչ վերաբերում է ածանցներին,ասեմ,որ նախօրոք բացատրվում է նրանց առաջացումը և նշանակությունները և հանձնարարվում տրված ածանցներով կազմել բառեր։Լավ յուրացնելուց հետո միայն նմանատիպ խաղ-մրցույթները հաջողությամ են գրանցվում։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1) Հ.Զաքարյան,Յու. Ավետիսյան <<Բառագիտություն>>
2) Դ.Գյուրջինյան <<Հայերենի բառարան>>
3) Ա.Մ.Սուքիասյան <<Հայոց լեզու>> (Բառակազմություն)
4) Դ.Գյուրջինյան
   Թ.Ալեքսանյան
   Աշ.Գալստյան
   <<Մայրենի 6>>
5) Եզեկյան <<Հայոց լեզու>> (Բառակազմություն)